

Պ-375-15.11.2019,02.03.2020-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 29-րդ հոդվածում՝

1)1-ին մասը «արձանագրությունում» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերով:

2)4-րդ մասը «հանգամանքները» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 209-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի չորրորդ նախադասության մեջ «արձանագրությունում:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Այս կարգը չի կիրառվում սույն հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերում:»:

2) լրացնել նոր բովանդակությամբ 3.1-րդ մասով՝

«3.1.Վկայի ցուցմունքը տեսաձայնագրառվում է, բացառությամբ, եթե առարկում է քննչական գործողության մասնակիցը, կամ բացակայում են համապատասխան տեխնիկական միջոցները: Հարցաքննության ընթացքի տեսաձայնագրառման դեպքում, եթե քննչական գործողության մասնակիցները չեն առարկում, ապա ցուցմունքները, այդ թվում՝ հարցերը և պատասխանները հարցաքննության արձանագրության մեջ չեն արտացոլվում: Տեսաձայնագրառումն ամրագրվում է երկու նյութական կրիչի վրա, որոնք կցվում են հարցաքննության արձանագրությանը: Նյութական կրիչներից մեկը կնքվում է եւ կարող է բացվել դատարանում, իսկ մյուս կրիչը կարող է օգտագործվել քննիչի կամ դատախազի կողմից՝ իրենց դատավարական լիազորություններն իրականացնելու նպատակով: Հարցաքննության ընթացքի տեսաձայնագրառման նյութական կրիչի կրկնօրինակը տրամադրվում է դատավարության մասնակիցներին՝ քրեական գործի նյութերին ծանոթացնելու ընթացքում:»:

3) 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝ «Սույն հոդվածի 3.1-րդ մասում նախատեսված դեպքերում հարցաքննության ավարտից հետո քննիչը վերարտադրում է ցուցմունքի տեսաձայնագրառումը, ինչի մասին նշվում է հարցաքննության արձանագրությունում: Տեսաձայնագրառման վերաբերյալ հարցաքննվող անձի հայտարարությունները քննիչը կամ հարցաքննվող անձը նշում է հարցաքննության արձանագրության մեջ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 216-րդ հոդվածը լրացնել նոր բովանդակությամբ 4.1 մասով.

«4.1. Առերեսման ընթացքի տեսաձայնագրառման դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1.-րդ մասով սահմանված կանոնները:»

Հոդված 4. Օրենսգրքի 337-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասում «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման» բառը,
- 2) 2-րդ մասը «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման կամ» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 342-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասում «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման եւ» բառերը,
- 2) 2-րդ մասը «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման կամ» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 (այսուհետ՝ Օրենսգրք) 29-րդ հոդվածում՝~~

~~1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ:~~

~~1) «1. Դատավարական գործողությունների ընթացքը և արդյունքներն արտացոլվում են արձանագրությունում (բացառությամբ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի), որը կազմվել է դատավարական գործողության ընթացքում կամ դրա ավարտից անմիջապես հետո:»:~~

~~4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ:~~

~~«4. Դատավարական գործողությունները արձանագրություններում նկարագրվում են այն հաջորդականությամբ, որով իրականում տեղի են ունեցել: Արձանագրությունում նշվում են դրանց կատարման ընթացքում ձեռք բերված և գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները (բացառությամբ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի), շարադրվում են դատավարական գործողության մասնակիցների հայտարարությունները:»:~~

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «արձանագրությունում» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերով:

2) 4-րդ մասը «հանգամանքները» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 209-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի չորրորդ նախադասության մեջ «արձանագրությունում:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Այս կարգը չի կիրառվում սույն հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերում:»:

2) լրացնել նոր բովանդակությամբ 3.1-րդ մասով.

~~«3.1. Հարցաքննության ընթացքի տեսաձայնագրառման դեպքում, եթե քննչական գործողության մասնակիցները և քննիչը չեն առարկում, ապա ցուցմունքները, այդ թվում՝ հարցերը և պատասխանները հարցաքննության արձանագրության մեջ չեն արտացոլվում: Այս դեպքում առարկությունների բացակայության մասին նշում է կատարվում արձանագրությունում, տեսաձայնագրառումը անրագրվում է երկու նյութական կրիչի վրա, որոնք կցվում են հարցաքննության արձանագրությանը: Նյութական կրիչներից մեկը կնքվում է և կարող է բացվել դատարանում՝ սույն օրենսգրքի 337-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված դեպքում, իսկ մյուս կրիչը կարող է օգտագործվել քննիչի կամ դատախազի կողմից՝ իրենց դատավարական լիազորություններն իրականացնելու նպատակով: Հարցաքննության ընթացքի տեսաձայնագրառման նյութական կրիչի կրկնօրինակը դատավարության մասնակիցներին օրենքով սահմանված կարգով տրամադրվում է՝ քրեական գործի նյութերին ծանոթացնելու ընթացքում:»:~~

3.1. Վկայի ցուցմունքը տեսաձայնագրառվում է, բացառությամբ, եթե առարկում է քննչական գործողության մասնակիցը, կամ բացակայում են համապատասխան տեխնիկական միջոցները: Հարցաքննության ընթացքի տեսաձայնագրառման դեպքում, եթե քննչական

գործողության մասնակիցները չեն առարկում, ապա ցուցմունքները, այդ թվում՝ հարցերը և պատասխանները հարցաքննության արձանագրության մեջ չեն արտագույվում: Տեսաձայնագրառումն ամրագրվում է երկու նյութական կրիչի վրա, որոնք կցվում են հարցաքննության արձանագրությանը: Նյութական կրիչներից մեկը կնքվում է եւ կարող է բացվել դատարանում, իսկ մյուս կրիչը կարող է օգտագործվել քննիչի կամ դատախազի կողմից՝ իրենց դատավարական լիազորություններն իրականացնելու նպատակով: Հարցաքննության ընթացքի տեսաձայնագրառման նյութական կրիչի կրկնօրինակը տրամադրվում է դատավարության մասնակիցներին՝ քրեական գործի նյութերին ծանոթացնելու ընթացքում:

3) 5-րդ մասում լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն հոդվածի 3.1-րդ մասում նախատեսված դեպքերում հարցաքննության ավարտից հետո քննիչը վերարտադրում է ցուցմունքի տեսաձայնագրառումը, ինչի մասին նշվում է հարցաքննության արձանագրությունում: Տեսաձայնագրառման վերաբերյալ հարցաքննվող անձի հայտարարությունները քննիչը կամ հարցաքննվող անձը նշում է հարցաքննության արձանագրության մեջ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 216-րդ հոդվածը լրացնել նոր բովանդակությամբ 2.1 4.1 մասով.

~~«2.1. Եթե քննչական գործողության մասնակիցները և քննիչը չեն առարկում, ապա առերեսումը կատարվում է սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով սահմանված կարգով:»:~~

«4.1. Առերեսման ընթացքի տեսաձայնագրառման դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1.-րդ մասով սահմանված կանոնները:

Հոդված 4. Օրենսգրքի 337-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման» բառը,
2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

~~«2. Չի թույլատրվում ցուցմունքների տեսաձայնագրառման կամ ձայնագրառման, վերարտադրությունն առանց նախապես հրապարակելու մեղադրյալի, ամբաստանյալի այն ցուցմունքները, որոնք պարունակվում են համապատասխան հարցաքննության արձանագրությունում կամ դատական նիստի արձանագրությունում: Սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասում նախատեսված դեպքերում դատարանը բացում է հարցաքննության տեսաձայնագրառման կնքված նյութական կրիչը և վերարտադրում է ցուցմունքի տեսաձայնագրառումը:»:~~

2) 2-րդ մասը «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման կամ» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 342-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման և» բառերը,
2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

~~«2. Վկայի ցուցմունքների տեսաձայնագրառման կամ ձայնագրառման, վերարտադրումը հնարավոր է միայն նրա հարցաքննության արձանագրությունը կամ դատական նիստի արձանագրության այն մասը հրապարակելուց հետո, որտեղ ամրագրված են վկայի ցուցմունքները: Սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասում նախատեսված դեպքերում դատարանը բացում է հարցաքննության տեսաձայնագրառման կնքված նյութական կրիչը և վերարտադրում է տեսաձայնագրառումը:»:~~

2) 2-րդ մասը «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման կամ» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՆԱԽԱԳԾԻ (Պ-375-15.11.2019,02.03.2020-ՊԻ-011/1)**

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑԿԱԾ ԳՐԱԿՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐ ՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 29-րդ հոդվածում՝ 1)1-ին մասը «արձանագրությունում» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

			2)4-րդ մասը «հանգամանքները» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերով:»		
2.	Կառավարություն, հեղինակ	Նախագծի հոդված 2-րդ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3.1.Վկայի ցուցմունքը տեսաձայնագրառվում է, բացառությամբ, եթե առարկում է քննչական գործողության մասնակիցը, կամ բացակայում են համապատասխան տեխնիկական միջոցները: Հարցաքննության ընթացքի տեսաձայնագրառման դեպքում, եթե քննչական գործողության մասնակիցները չեն առարկում, ապա ցուցմունքները, այդ թվում հարցերը և պատասխանները հարցաքննության արձանագրության մեջ չեն արտացոլվում: Տեսաձայնագրառումն անրագրվում է երկու նյութական կրիչի վրա, որոնք կցվում են հարցաքննության արձանագրությանը: Նյութական կրիչներից մեկը կնքվում է եւ կարող է բացվել դատարանում, իսկ մյուս կրիչը կարող է օգտագործվել քննիչի կամ դատախազի կողմից՝ իրենց դատավարական լիազորություններն	Ընդունվել է	Ընդունվել է

			իրականացնելու նպատակով: Հարցաքննության ընթացքի տեսաձայնագրառման նյութական կրիչի կրկնօրինակը տրամադրվում է դատավարության մասնակիցներին քրեական գործի նյութերին ծանոթացնելու ընթացքում:»		
3.	Կառավարություն	Նախագծի հոդված 3-րդ	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 216-րդ հոդվածի 4.1 մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ««4.1. Առերեսման ընթացքի տեսաձայնագրառման դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1.-րդ մասով սահմանված կանոնները:»	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն, հեղինակ	Նախագծի հոդված 4-րդ	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) 2-րդ մասը «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման կամ» բառերով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն, հեղինակ	Նախագծի հոդված 5-րդ	Նախագծի 5-րդ հոդվածի Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) 2-րդ մասը «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման կամ» բառերը:»:	Ընդունվել է	Ընդունվել է